

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐՈՒ ԿՐԾՆԱՊԵՏԻՆ
ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Իրրեւ մեր երկու ժողովուրդներուն կրօնական պատասխանատուները, մտազբաղ՝ մեր հոգեկան զաւակներուն վիճակով եւ մտահոգ՝ անգրութենէն, չարակամութենէն եւ ատելութենէն, որոնք զիրենք կ'առաջնորդէ Աստուծոյ կամփին հակառակ արարքներու, իրարու հանդիպեցանք Մոնթրէոյի մէջ, Ջուիցերիա, 6-8 Փետրուար 1993, շնորհիւն Աստուծոյ եւ մախաճեռութեամբն Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, գործակցութեամբը՝ Եւրոպական Եկեղեցիներու Համագումարին: Տավա՛ն եւ Օգնութիւն Մահմետական Միջազգային Խորհուրդի ընդհանուր քարտուղարը կը մասնակցէր որպէս դիտորդ:

Քննարկելով մեզի ինչպէս նաեւ մեր ազերիներուն սպառնացող վտանգները, մեզի էական կը թուի նախ ընդգծել, որ հակառակ փորձերու՝ ներկայացնելու հակամարտութիւնը - որ ամենդ գոհերու արիւնը հեղուց - որպէս քրիստոնեաներու եւ մահմետականներու միջեւ բախում մը, հարցը չի վերաբերիր կրօնական հակամարտութեան: Հայ քրիստոնեաները եւ մահմետական ատրպէճեանցիները ապրած են եւ պիտի ապրին խաղաղութեամբ, յարգամբի եւ քարի դրացնութեան մթնոլորտի մը մէջ:

Ի սրտանց կ'աղօթեմք բարձրեալն Աստուծոյ, հոգիի հանգիստին համար բոլոր անոնց, որոնք մեռան ողբերգական դէպքերու ընթացքին: Ի յարգանս իրենց յիշատակին, եւ մեր երկու ազգերու ապագայի շահին համար, մեր հոգեկան զաւակներէն կը պահանջեմք որ դադրին արիւն թափելէ, ու բոլոր խնդիրները լուծեն խաղաղութեան եւ արդարութեան մէջ, դիմելով քաղաքական միջոցներու, համաձայն համաշխարհային ընդունուած միջազգային կանոններու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութեան Մերձաւոր եւ Միջին Արեւելքի բաժնի վարիչ Հէմրի Գրիգորեան եւ նոյն բաժնի քարտուղարներէն Արսէն Գասպարեան, Իսրայէլի կառավարութեան հիւրը եղան Երուսաղէմի մէջ, Փետրուար 16-21, դիւանագիտական ներկայացուցչութեան հիմնադրման հարցերով զբաղելու համար: Պատրիարք Սրբազան Հայրը նախապէս խորհրդակցած էր Իսրայէլի Արտաքին Գործոց Նախարարութեան հետ, եւ հիւրերու ժամանման գիշերն իսկ Պատրիարքարանի մէջ անոնց հետ հանդիպման ընթացքին խորհրդակցեցան ապագայ ծրագիրներու եւ կարելիութեանց մասին:

Հիւրերը պատեհութիւն ունեցան տեսակցելու Միաբանութեան եւ մեր համայնքին անդամներուն հետ, (Միաբանական սեղանատան մէջ ճաշակից լինելով, եւ Փետրուար 18ի գիշերը հրապարակային երեկոյթի ընթացքին խօսելով Հայաստանի ներկայ կացութեան մասին): Այցելեցին գործարանատէր հայերու արհեստանոցները եւ Պատրիարքութեան հաստատութիւնները, մասնակցեցան Սուրբ Տեղեաց պաշտամունքներուն, եւ մօտէն ծանօթացան Հայ Երուսաղէմի պատմական նշանակութեան եւ հոգեւոր ու ազգային ժառանգութեանց անկապուտ պահպանման համար անոր ներկայութեան եւ զօրացման կարեւորութեան: Հէմրի Գրիգորեան վարանումով յատենց իր ներքին խորունկ ցանկութիւնը ստանալու Հայց. Եկեղեցւոյ Մկրտութեան եւ Դրոշմի Խորհուրդները, որոնցմէ զրկուած կը զգար կեանքի պարագաներու բերումով: Լուսարարապետ Դաւիթ Սրբազանի կարգադրութեամբ հոգեկան այդ գոհունակութիւնն եւս ստացան, դէպի Կիպրոս իրենց մեկնումէն առաջ:

Պատրիարքարանի եւ մեր համայնքի անդամներու ժամնակութեամբ յուսալից ենք որ կարելիութիւններ պիտի ստեղծուին կազմակերպելու համար Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչութեան կեդրոնը Իսրայէլի մէջ: